

ԼԵՎՈՆ ՇԱՆՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ն. ՍԱՐԻՍՅԱՆ

Հայոց մշակույթի պատմության և մասնավորապես նրա ականավոր դեմքերի ստեղծագործությունների հետազոտությունը մի ընդհանուր թերություն է դրոշմված, որ գիտությունների զարգացման արդի պահանջների տեսակետից միանգամայն անբավարար է: Մեր հոգվածներում, ուսումնասիրություններում, հեռուստատեսային ելույթներում օրինականացրել ենք համընդհանուր հասկանալիության մի հովվերգական վիճակ, երբ ավելի շատ հուզականորեն վերապատմում ենք բնագիրը, քան վերլուծում ու մեկնաբանում: Մենք խոսում ենք հազարամյակների մեր մշակույթի, մեր հոգևոր արժեքների մասին, սակայն տակավին հարց չենք առաջադրել, թե արդյո՞ք ունենք մեր փիլիսոփայությունը, մետաֆիզիկայի մեր ազգային տարբերակը: Մեր պատկերացումները դեռ մնում են ընդհանրացված, մասնատված: Գրականագետը ներփակվում է իր նյութի ոլորտում, տնտեսագետը հայթայթում է փաստերի իր բաժինը, պատմաբանը հետամուտ է դեպքերի ժամանակագրությանը և այլն: Այսպես էլ մեզ հայտնի է Արուսյան-գրողը, Արուսյան-տնտեսագետը, Արուսյան-մանկավարժը, Արուսյան-ազգագրագետը, բայց անհայտ է Արուսյանի իբրև փիլիսոփայորեն ընդհանրացված մշակութաբանական (կուլտուրոլոգիական) երևույթ:

Այսպես և Լևոն Շանթը: «Հին աստվածների» հեղինակը բացի գեղարվեստական արձակից և դրամաներից, ստեղծել է հսկայական ծավալի հրապարակախոսական, հայագիտական, հոգեբանական ու մանկավարժական աշխատություններ, որոնք տակավին մնում են շթերթված, չլուրացված, չուսումնասիրված: Մի ամբողջ շարք են կազմում հասարակագիտական-աղգաբանական հետազոտությունները («Ազգությունը հիմք մարդկային ընկերության», «Անհավասարությունը ընկերային կյանքի մեջ», «Մտավորականություն և կուլիկցություն», «Անկախությունը պահանջ ազգային գոյության և այլն»), որոնցում վերլուծվում են ժամանակակից հասարակությունների սոցիալական ու ազգային կառուցվածքը: Մի երկրորդ շարքում քննության են առնվում գրականության պատմության ու գեղագիտության հարցերը («Սեռն ու նյութը բանահյուսության», «Բանահյուսական ճարտարապետություն», «Ինչ է գիրքը», «Հայ բանահյուսություն» և այլն): Վերջապես, նույնպիսի օղակներում, լուսաբանվում են մանկավարժության, հոգեբանության և լեզվաբանության ոլորտին վերաբերող տեսական ու պատմական խնդիրներ:

Շանթի գրչին են պատկանում մանկավարժական բնույթի երկու աշխատություն՝ «Կրթությունը ընդհանրապես» և «Ուսում և կրթությունը դպրոցական»։ Եթե «Ուսում և կրթությունը դպրոցականում» քննվում են ուսուցման գործնական մեթոդին վերաբերող հարցերը, ապա «Կրթությունը ընդհանրապես» մատյանում մեկնաբանվում են դիդակտիկայի փիլիսոփայական հիմունքները: Այստեղ արդեն որոշակիորեն ի հայտ է գալիս Շանթի աշխարհընկալման մի էական առանձնահատկությունը՝ աշխարհն իր ամբողջականության ու տիեզերական միասնության մեջ դիտելու սկզբունքը: Եթե բնությունը, մարդը, իրերը, երևույթները, տիեզերական ամբողջի մասերն են և նախաստեղծ են համատիեզերական ընդհանրությամբ, ուրեմն դրանք բնություն կա մի ընդհանուր սկիզբ և միացնող անհրաժեշտություն: Ահա թե ինչու, լինի դա սոցիոլոգիական տրակտատ, բանահյուսության պատմություն, հրապարակախոսական երկ, թե մանկավարժական տեսություն, ամենուրեք Շանթի մեկնաբանական ճշակետը հանգում է գոյաբանական-փիլիսոփայական

նույն սեզոնին, և այս սկզբի վրա միանգամայն որոշակի է գծվում նրա գիտական կայր ներդաշնակությանը, գեղեցկին ու կատարյալին ձգտող գեղագիտական իդեալի հետ:

«Կրթությունը ընդհանրապես» աշխատությունը բաղկացած է յոթ հատվածից՝ «Կրթություն և իր բնական բաժանումները», ուր սահմանվում է առարկան ու նրա ուսումնասիրության մեթոդը, «Անվար կրթություն», այսինքն բնական կրթություն, որ չի վարվում ուսուցչի կողմից, «Լեկավար կրթություն»՝ այն օղակներն ու հաստատությունները, որոնք ուղղություն են տալիս կրթությանը (ընտանիք, դպրոց), «Հոգեկան կարողությունները»՝ զարգացման դեկավարությունը՝ ֆիզիկական, մտավոր ու զգացական կրթություն, սկզբունքները, «Դաստիարակություն»՝ անհատի ներքին ու արտաքին էթիկան՝ դիտված մասնավոր կյանքի ու հասարակական ամենալայն առնչությունների մեջ, Վեցերորդ հատվածի նյութը վերաբերում է ուսուցմանը և քննության շրջանակների մեջ է առնում դպրոցն իր ամբողջ կառուցվածքով՝ ուսուցման նյութն ու ուղղությունները, եղանակները, դպրոցական տնօրինությունները՝ տնտեսական, բարոյական ու իմացական տեսանկյուններից և այլն: Վերջապես յոթերորդ հատվածում հավաքական համակարգի են բերվում ինքնակրթության ձևերն ու սկզբունքները, նրա դերը անհատի մտավոր ու հոգեկան կարողությունների կազմավորման գործում: Ինչպես տեսնում ենք, Շանթի գիտական ներսուզված է իմացաբանական-փիլիսոփայական մի ոլորտի մեջ, որը աշխարհայացքային իր ընդհանուր դրվածքով առնչվում է նրա գեղագիտական համապարփակ համակարգի հետ և հանդես գալիս որպես նրա դրսևորման ձևերից մեկը: Հայտնի է, որ Շանթը հոգեկան-զգացական ու մտավոր գործունեությունն ամբողջապես փոխադրում էր բանահյուսության ոլորտը: Ավելին, նա նույնիսկ բնությունն է ընկալում որպես մի յուրօրինակ բանահյուսություն: Այսպես էլ կրթությունն իբրև լինելություն, իբրև շարժում, իբրև ստեղծում, Շանթը մեկնաբանում է որպես բանահյուսություն: Եվ միանգամայն գեղեցիկ էլ նա սկսում է այդ բանահյուսության մեկնությունը, տարրալուծելով այն ամբողջ բնության մեջ, որպես իրերի ու երևույթների գոյության հատկանիշ: «Ամեն մարմին հատկություններու գումար մըն է», —ասում է Շանթը, արտաքին, տեսանելի, ֆիզիկական և ներքին որակական հատկություններ: Ճանաչել իրը, առարկան, նյութը և հայտնաբերել նրա հատկությունը, նշանակում է կրթել նրան: Երկաթն ունի պողպատ դառնալու հատկություն և երբ նա ճարվ ու ծեծով կամրանա ու կը դառնա պողպատ՝ կրնանք ըսել, թե երկաթը պողպատի կրթություն ստացավ¹: Այսպես էլ՝ քարը տաշել, նշանակում է կրթել նրան, և ճարտարապետական սյուները, արձանները ոչ այլ ինչ են, եթե ոչ կրթված քարեր, և կրթությունն ինքը ոչ այլ ինչ է, եթե ոչ նոր որակի փոխարկում: Բայց եթե անօրգանական նյութի կրթությունն իրացվում է արտաքին ուժերի ազդեցությամբ, ապա բուսական աշխարհում կրթությունը ձեռք է բերում ներքին ազդակ: Արդեն միաբնից բույսն ունի աճելու կարողություն: Այսինքն շրջապատից ստանալով որոշ նյութեր, նրա մեջ կատարվում են քիմիական որոշ գործընթացներ, որոնք փոխակերպում են նրա էությունը, նրան տալով տրոհվելու, այսինքն բազմաճյուղ ունակություն: Երևույթը անհամեմատ ավելի բազմաճյանակ դրսևորումներ է գտնում բազմաբնից բույսերի աշխարհում, ուր տեղի է ունենում ծաղկման, բեղմնավորման, սերմի գոյացման աստիճանական գործընթաց, և արարվում է բազմացումը, տեսականների տեղականությունը: Այստեղ ի հայտ է գալիս բնության առեղծվածներից մեկը՝ ժառանգականության օրենքը՝ վերարտադրության, թռիչքի, որակափոխման տիեզերական ունակությունը, առանց որի անկարելի է ռամենն ուր ստեղծագործություն: Ժառանգական ստեղծագործության այս առեղծվածի

¹ Լևոն Շանթ, Երկեր, հ. 6, Բելուս, 1951, էջ 9 (այսուհետև այս և Շանթի ծերեկերի 7-րդ հատորից (Բելուս, 1952) արվող մեջբերումների հառաքն ու էջը կնշվեն բնագրին կից):

վրա է հենվում բուսաբանական գիտութիւնը, որից և արտածվում է «բուսական դաստիարակութիւնը» կամ «բուսական մանկավարժութիւնը»։ Աճելութեան ամեն մի նորաձեւութիւնը զարգացման ու կատարելագործման ճիգտու է և այստեղ է «կրթութեան գաղափարի բուսական ըմբռնումը» (6, 11)։

Կրթութեան մի նոր աստիճան է նշանավորում կենդանական աշխարհը։ Զիդի և մկանի գործողութիւնն այստեղ առաջ է բերում զգայական, զգացական, մտածական, կամային շարժումների այնպիսի բարդ երևույթներ, որոնք ունեն բուսական աշխարհին անհայտ իրենց գործարաններն ու կենտրոնները։ Բույսերը նույնպես ունեն արտաքին ազդակներ ընկալելու բջջային «զգացողութիւններ», ինչպես արևածաղկի դարձը դեպի արևը, որոշ ծաղիկների բացվելը լույսի հետ, ճանճորս ծաղկի բջջային գործողութիւնը և այլն, սակայն նրանք չունեն բոլոր գործողութիւնները կարգավորող այն կենտրոնը, որ կոչվում է հոգի, և որը, օրինակ, շան էութեան մեջ դաստիարակում է ուշադրութիւն, հոտառութիւն, հիշողութիւն կամ ձիուն կրթում է քայլքի, վազքի, կամքի, հպատակութեան և այլ հատկանիշներով։ Կենդանական կրթութեան գաղափարն այսպիսով հանգում է հոգեկան ունակութիւնները հոգեկան կարողութիւնների վերածելու գործողութեան։

Մարդը բնութեան մասնիկն է, նրա զարգացման բարձրագույն դրսևորումը։ Եվ ինչպես կենսաբանական իր կազմավորման ընթացքում նա անցնում է կենդանական էվոլյուցիայի բոլոր աստիճանները, նույնպես և նրա զգայական, հոգեկան լինելութիւնը կրում է անօրգանական թե օրգանական բջջային իրերի ու էութիւնների կրթութեան հատկանիշները։ Կենդանիները նույնպես ունեն շարժումների ու հնչումների իրենց լեզուն, հոգեկան վիճակներ արտահայտելու միջոցներ, զգալու ունակութիւն, նրանք նույնպես ունեն իրենց քաղաքակրթութիւնը, ինչպես օրինակ, բուն դնելը, չվելը, համայնքային կամ հոտային համակեցութիւնը, ընտանիքը և այլն։ Եվ սակայն կա ներկու հանգամանք, որ մարդու գործունեութեանը տալիս է միանգամայն նոր թռիչք և անսահման, անկրկնելի հնարավորութիւն՝ բառը և ձեռքը։ Շանթի բնորոշմամբ, «բառը շաղախն է մարդկային ամբողջ քաղաքակրթութեան»։ Դրանից են սկիզբ առնում բանականութիւնը, պատմութիւնը, հասարակութիւնը, հոգեկան կեցութեան բոլոր արժեքները, գիտութիւններն ու բանահյուսութիւնները։ Ինչ վերաբերում է ձեռքին, ապա սա իր հերթին ստեղծողն է նյութական արժեքների՝ գործիքների, զենքեր, հագուստների, զարդեր, շենքեր, արհեստների, արվեստների, նկար, գիր և այլն։ Այսպիսով, բառի ու ձեռքի միջոցով են գոյանում քաղաքակրթութեան հոգևոր ու նյութական ստեղծագործութիւնները և այստեղ է կատարվում անհատի բուսական ու կենդանական զարգացման հեղափոխական այն թռիչքը, որը միանգամայն նոր բովանդակութիւն է տալիս մարդկային կրթութեանը, այսինքն կրթութիւնը բարձրացնում է քաղաքակրթութեան հոմանիշի։ Մարդկային կրթութիւնը անհատի ձևավորման բնական ու հասարակական ազդակների ընդհանուր ընթացքի վրա գծում է ֆիզիկական, մտավոր ու հոգեկան մի ամբողջութիւն, որի բաղադրիչներն են զարգացումը, դաստիարակութիւնը և ուսումը։

Կրթութեան հավերժական ու զարմանահրաշ օրրան է բնութիւնը։ Մարդը, բացառելով է Շանթը, օրգանական էակ է՝ բուսական ու կենդանական կարողութիւններով օժտված։ Նրա ֆիզիկական ու կենսաբանական հատկութիւնները ձևավորվել են բնութեան ազդեցութեան տակ և, լինելով բնութեան մեկ մասնիկը, նա ենթակա է նույն օրենքներին։ Այսպիսով, շրջապատող բնութիւնը՝ լեռները, հարթավայրերը, անտառները, գետերն ու աղբյուրները, ծովը, ապառաժները և այլն մարդու բնավորութիւնն ու հասկացողութիւնները կրթող ունակութիւններն են։ Լեռները տալիս են թռիչքի, բարձունքի, անկման ըմբռնումներ, հարթութիւնները՝ հորիզոնի անսահմանութեան, աստղերը՝ հեռավորութեան ու խորհրդավորութեան, արշալույսերը՝ ծագումի ու պայծառութեան, գիշերները՝ վախի ու շարժի, աղբյուրները՝ մշտական հոսքի ու նարնջաշող առվի։ Աշխարհագրական այս միջավայրը կլիմայի հետ

ստեղծում են ուրույն կենսապայմաններ, որոնք կրթում են մարդու բնավորությունը, մտավոր ու ֆիզիկական գործունեությունը: Բուսական ու կենդանական աշխարհը (անտառները, արոտավայրերը, արտերը, այգիները, պուրակները, թռչունները, զազանները, կենդանիները) իր հերթին դաստիարակում է մարդու երևակայությունն ու հնարամտությունը, քաղաքակրթում նրա զբաղումների ու կենսազգացողության ոլորտները: Մյուս կողմից, բուսական ու կենդանական աշխարհը կրթում է մարդու զգայարաններն ու զգացումները՝ ձևերի, գույների, կերպի ու դասավորության նմանարկումը: Այստեղից է սկիզբ առնում գեղարվեստը: Բույսերի ու կենդանիների աշխարհից է առնված ճարտարապետությունը, եգիպտական սյուներն օրինակված են արմավենիներից, սյուների գլխազարդը՝ նեղոսյան լոտոսից, կենցաղային իրերը, զարդերը, գործիքները նմանակված են կենդանիներին և այլն: Մարդու գեղարվեստական գործունեությունը, ոճերն ու ճաշակը արդյունք են բուսաբանական դաստիարակության: Նույնը վերաբերում է նաև մտավոր գործունեությանը: «Մարդոց հասկացողությունները կը կազմվին, փիլիսոփայությունները կը հասունան, կրոնները կը ձևավորվին, գիտությունները կը մշակվին, պատմություններ կը հյուսվին բույսերու, կենդանիներու, ժողովուրդներու շարժումները, կերպերը, գույները և անոնց էությունը գիտելով ու մեկնաբանել ուզելով» (6, 41):

Ծիշտ է, որ մարդը բնության մասնիկն է, բայց նա նաև հասարակական կենդանի է, ասում է Շանթը, նշելով այն երկրորդ միջավայրը, որի ներազդեցությամբ ձևավորվում է մարդկային կրթությունը: Սկիզբը մայր ընտանիքն է, ուր ծնվում է անհատը և յուրացնում նրա կենցաղային ու հոգևոր պաշարները, ապա հաջորդում են անհատական ընտանիքը, միջավայրը, գյուղը, քաղաքը, հասարակական կյանքը, ժողովրդի հոգևոր մթնոլորտը, այլ ժողովուրդների կենսամիոթը, վերջապես մարդկության ընդհանուր հոգևոր փորձը: Այս ամենը պայմանավորում են մի երկրորդ բնություն, միջավայր, մարդու իսկ ստեղծած բնությունը, որը քաղաքակրթական իր ամբողջ ստեղծումներով դառնում է անհատի հոգևոր ու նյութական մշակույթի կազմավորման գլխավոր ազդակներից մեկը: Պետությունը, կառավարական մեքենան, բանակները, զենքերը, շենքերը, օրենքները, դատական մարմինները, տնտեսական հաստատությունները, բարեգործական ընկերությունները, առևտրական տները, հասարակական կազմակերպությունները, կրթական, առողջապահական, պաշտամունքային հիմնարկները, վերջապես գիտական, գեղարվեստական հայտնությունները մարդկային առօրյայի մշտական վկաներն են, նրա նյութական ու հոգևոր պետքերի անխուսափելի ուղեկիցները: Եվ գոյության այդ ձևերը, ճամփն օր կրկնվող աշխատանքը, ձեռք բերած հմտությունները, վարժությունները կը դառնան մեր հոգիին մեջ նոր տեսակի ժառանգություն մը, անձնական ստացական ժառանգության մը, որ ավելանալով ի ծնե ու պատրաստի ստացված ժառանգական ունակություններուն ու հակումներուն՝ կը կազմեն «երկրորդ բնություն» մը և միջավայրի արտաքին ազդակներուն հանդեպ կը խաղան ընտրողի, ընտրվողի կամ մերժողի ու դիմադրողի դեր» (6, 64):

Մարդկային բնույթի կազմավորման դիդակտիկան Շանթի մեկնությամբ վերաճում է մի շքեղ ու հույակապ սիմֆոնիայի: Եվ ամենուրեք զարմանք է պատճառում նրա խորիմացությունը բնագիտության, հասարակագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, էթիկայի, քաղաքական ասպարեզներում, այլև նրա բացառիկ նրբատեսությունը մարդկային ֆենոմենի ներքին բնազդների ու զգացական վերապրումի կուհումներում: «Կրկնելու հակում ու նորության սեր», «Ընդօրինակելու հակում և ինքնօրինակության պահանջ», «Խաղ ու աշխատանք», «Բնական ու արվեստական ընտրություն», «Նպատակի, ազդակների ու ժամանակի ընտրություն», «Հաջորդականության ընտրություն», «Անհատական ու հանրային դրդիչներ» և այլն, կրթական ընդհանուր համակարգից արտածված իրողություններ են սրանք, որոնք մարդու լրնջությունը գեղակուհի են ներարկում են հոգեբանական ու պատմափիլի-

սոփայական խորին իմացություններ: Ահա, օրինակ, բնական ընտրության օրենքը: Այդ օրենքը բուսական ու կենդանական աշխարհում գործում է անշեղ պատճառականությամբ ու գեղեցիկ ներդաշնակությամբ, քանի որ ունի արարչական սկիզբ: Սակայն ահա նույն օրենքը մարդու հասարակական գոյության մեջ ենթակա է գիտակցական կարգավորման, քանի որ հանդիպադրվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ հակասությունների պատճառականությամբ: Հետևաբար, որքան էլ բնական ընտրությունը էական սկզբունք է կրթության ասպարեզում, այնուամենայնիվ անհատի զարգացումը կախում ունի նաև անձնական ու հասարակական ընտրության հանգամանքից: Այս տեսակետից ինքնին կրթական նշանակություն է ստանում հոգեկան կարողությունների զարգացման ղեկավարությունը: Մարմնի զանազան օրգանների կրթությունը, մտածումի կրթությունը՝ (պատկերավոր, վերացական), հիշողության, երևակայության, ուշադրության, կամքի կրթությունը, վերջապես զգացմունքների կրթությունը (բնական, հասարակական, ազգային) ղեկավար սկզբունքներ ունեն, որոնք ուղղություն են տալիս անհատի ձևավորմանը, նրա ունակությունների կենտրոնացմանը, նպատակային գործողությանը: Ի դեպ, ուսանելին այն է, որ Շանթը ոչ միայն բնորոշում է երևույթների ֆունկցիոնալ նշանակությունը, այսինքն, ոչ միայն ուրվագծում է հիշողության, երևակայության, կամքի և այլնի գիդակտիկ կարևորությունը, այլև բնութագրում է ֆենոմենի կենսահոգեբանական էությունը: Ահա, օրինակ, կամքի սահմանումը. «Կամքը որոշ մկանային շարժումներու գործադրության որոշումն է: Ուղեղի զգայական կենտրոններուն մեջ որոշ մասերու գրգռված վիճակն է, ուրկե գրգռը, եթե բավական ուժեղ ըլլա կը հոսի ուղեղի շարժիչ մասերը և հոնկե ալ մկաններուն, որով կամքը կը դառնա գործ» (6, 131):

Գեղագիտական ու էթիկական մի հիանալի խորհրդարան է «Դաստիարակություն» հատվածը: Շանթը կառուցել է անհատի ներքին ու արտաքին շարժումներ կրթող մի գեղեցիկ ուսմունք, սահմանելով ոչ միայն նրա արտահայտության էթիկան (պահվածքի վայելչություն, ինքնաճանաչում և այլն), այլև տիրապետելու եղանակները (վարժություն, օրինակելիություն, սկզբունքի մշակում), կրթական մի ամբողջական համակարգ, որն ուղղություն է տալիս կատարյալ, ներդաշնակ անհատի հոգևոր, ֆիզիկական ու մտավոր զարգացմանը:

Ոչ միայն մեթոդական, այլև տեսական ու պատմական հարցադրումներով է հատկանշվում «Ուսում» հատվածը: Պատմական ուրվագիծ տալով դպրոցի ծագմանն ու զարգացմանը, Շանթը հանգամանորեն անդրադառնում է ժամանակակից դպրոցների սոցիալական ու պետական-կազմակերպական սկզբունքների վերլուծությանը, նշում ուսուցման մեթոդական ուղեցույցեր: Եվ ուշագրավը հատկապես այն է, որ նա առաջին անհրաժեշտության վրա է դնում ժողովրդական կրթության խնդիրը՝ որպես մարդկության ընդհանուր առաջադիմության նախապայման: Ինչ վերաբերում է դպրոցական ուսուցման, մանկավարժական մեթոդիկայի ուղեցույցին, ապա Շանթը, ինչպես նշվեց, անդրադարձել է դրան մի ամբողջ աշխատությամբ, որը կրում է «Ուսում ու կրթություն. դպրոցական» խորագիրը: Հեղինակը նշում է, որ ժամանակակից դպրոցի իրական վիճակը «ենկարագրելու համար չէ, որ այս գիրքը կը գրեմ, այլ՝ բռնելու համար այն դպրոցը ուր պիտի հասնինք, եթե կուզենք մ:սրդկային սևտիճանական բարձրացումն ու զարգացումը» (7, 12): Ուրեմն առաջադրվող աշխատությունը ոչ միայն գործնական ձեռնարկ է, այլև ծրագիր, որն ուղենշում է դպրոցի զարգացման հեռանկարը: Եվ հիմա մի բարձր համակարգ է ներկայացնում այն դպրոցը, որ պատկերում է Շանթը մանկավարժական իր մատչանում: Նա կառուցում է դպրոցի արտաքին ու ներքին ընդգրկումները՝ տեղի, դիրքի, վարչական կազմի, ուսուցչի, աշակերտի և կազմակերպական այլևայլ միավորների հարաբերակցության, հանրակրթական գիտելիքների ուսուցման մի ամբողջական համակարգ, որը գծում է անհատի հոգևոր, բարոյական և քաղաքացիական կառուցի դիտարկման հիմունքները:

Շանթի դիդակտիկայի փիլիսոփայական համակարգը ուսումնասիրելու տեսակետից բացառիկ նշանակություն ունի նաև «Հոգեկան կարողությունների զարգացումը մինչև մարդ» աշխատությունը: Դա բնափիլիսոփայական մի յուրօրինակ հանրագիտարան է, ուր վերլուծված է կյանքի և զգայության ծագման ու զարգացման բնապատմական պրոցեսը՝ բուսական ու կենդանական աշխարհի կազմության միլիոնավոր տարիների տևողության ընթացքում: Ժամանակակից բնագիտության ու հոգեբանության փորձնական արդյունքների հիման վրա դասակարգելով կենդանական ու բուսական աշխարհի էվոլյուցիան, սկսած միաբջիշ կենդանուց մինչև մարդ, Շանթը գծում է հոգեկան կարողությունների ծագման, ձևավորման ու զարգացման թռիչքային անցումները՝ գրգռականություն, անդրադարձություն (ռեֆլեքս), իմացականություն, բանականություն, ցույց տալիս զգայական օրգանների, ուղեղի կենտրոնների հունկցիոնալ գործակցության ժառանգական կապն ու պատճառականությունը: Եվ այս հանրագիտական ձեռնարկը ըստ մասնային հետաքրքրական է ոչ միայն իրրե գիտական ինքնուրույն ուսումնասիրություն, որքան գիտության փորձի յուրացման զարմանալի հմտություն, ամբողջական համակարգ ստեղծելու արտակարգ ունակություն և երևույթների տիեզերական միասնությունը կոհսեելու փիլիսոփայական աշխարհիմացություն:

ТЕОРИЯ ОБРАЗОВАНИЯ ЛЕВОНА ШАНТА

С. Н. САРИНЯН

Р е з ю м е

Исходя из понятия космического единства и характеризуя естественно-философское начало дидактики, Л. Шант считает, что педагогика без психологии, психология без физиологии и физиология без естествознания представляют собой отвлеченное понятие. Высшей формой образования является педагогика со своей сложной познавательной системой—природой, генетикой, семьей, школой, обществом, национальностью, человечеством и т. д., предмет которой—создание высшей гармонии духовного и физического начала в контексте совершенной личности.

LEVON SHANT'S THEORY OF EDUCATION

S. N. SAPINIAN

S u m m a r y

Proceeding from the conception of cosmic unity and characterizing natural philosophical beginning of didactic, L. Shant considers, that pedagogics without psychology, psychology without physiology and physiology without natural science are an abstract conception. Pedagogics is the highest form of education with its complicated cognitive system—nature, genetics, family, school, society, nationality, humanity, etc., the subject of which is the creation of the highest harmony of spiritual and physical beginning in the context of perfective personality.